equiti | CAPITAL

Eduard Dadalyan

Head of Internal Audit

Էդուարդ Դադալյանը ծնվել է 1978թ. Վրաստանի Հանրապետության Լագոդեխի քաղաքում:

1995-2004 թթ.-ին սովորել է Հայաստանի Պետական Գյուղատնտեսական Ակադեմիայի Ագրարային արտադրության էկոնոմիկայի և կառավարման ֆակուլտետում: Ունի էկոնոմիկայի մագիստրոսի կոչում:

1998-2000թթ. զինվորական ծառայության է անցել ԼՂՀ 2-րդ պաշտպանական զորամասի հակաօդային պաշտպանության գումարտակում:

2000-2002թթ. աշխատել է «Գամբիտ» ՍՊԸ-ում որպես Գլխավոր տնտեսագետ:

2004-2005թթ. աշխատել է «Ֆինանկո» ՍՊԸ-ում որպես Ավագ վերահսկիչ:

2005 թ.-ից մինչև 2007թ. ընկած ժամանակահատվածում աշխատել է «Յունիբանկ» ՓԲԸ –ի Ներքին Աուդիտի և Ռիսկերի կառավարման, վերլուծությունների և ստրատեգիկ պլանավորման վարչություններում որպես աուդիտոր և Ֆինանսական վերլուծության բաժնի մասնագետ:

2007-2008թթ. աշխատել է «ՍԵՖ Ինտերնեյշնլ ՈՒՎԿ» ՍՊԸ-ում որպես ընկերության Գլխավոր աուդիտոր:

2008-2009թթ. անցել է աշխատանքի «ԱՄԵՐԻԱ ԻՆՎԵՍՏ» ՓԲԸ-ում որպես Գլխավոր աուդիտոր:

2009 թ.-ին ընդունվել է «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ –ի Կառավարման, Ռիսկերի և Ներքին վերահսկողության վարչություն՝ Ռիսկերի գնահատման գծով առաջատար մասնագետի պաշտոնին: 2019 թ.-ից առ այսօր նույն ընկերությունում (այժմ վերանվանվել է ՄՏՍ Արմենիա ՓԲԸ -ի) զբաղեցնում է Ռիսկերի Կառավարչի (Risk Manager) պաշտոնը:

2013 թ-ից համատեղության կարգով անցել է աշխատանքի «Էքուիթի Էյ Էմ » Ընկերություն՝ ներքին աուդիտի բաժնի ղեկավարի պաշտոնին, որտեղ և աշխատում է առ այսօր: